Արձանագրություն N 2

Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի հենապատերի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման «ԵՔ-ԲԸԾՁԲ-17/111» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի բացման նիստի

ք. Երևան

12.04.2017թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Տ. Իգիթյան/ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ե. Կարապետյան /գնահատող/, Ա. Կիրակոսյան /գնահատող/, Կ. Հարությունյան /բացող/, Ա. Հարությունյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

1. Տեղեկություններ «ԵՔ-ԲԸԾՁԲ-17/111» ծածկագրով գնման ընթացակարգին հայտերի բացման մասին

(Տ. Իգիթյան)

Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2017 թվականի ապրիլի 12-ին, ժամը 10:00-ին, Երևանի քաղաքապետարան, ք. Երևան Արգիշտի 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

2. «ԵՔ-ԲԸԾՁԲ-17/111» ծածկագրով գնման ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների մասին

(Տ. Իգիթյան)

Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

հ/հ	Մասնակիցների անվանումը
1	«Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ
2	«Մառք» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3.Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին

(Տ. Իգիթյան)

3.1 Բաց ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները.

Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի հենապատերի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ				
Մասնակցի անվանումը	Նախա-հաշվային գինը	Առաջարկած գինը		
		Արժեք	Շահույթ	Ընդհանուր
«Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ	36000	22500	2500	25000
«Մառք» ՍՊԸ		39000		39000

3.2 Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկներում չկան թվաբանական անճշտություններ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4.Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

(Տ. Իգիթյան)

4.1 «Մառք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված էլեկտրոնային փաթեթում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին,

4.2 «Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված թիվ 4 հավելվածը /գնային առաջարկ/ չի համապատասխանում հրավերով սահմանված գնային առաջարկին: Մասնակցի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է,

4.3 Գնահատող հանձնաժողովի կողմից մասնակիցների հայտերը էլեկտրոնային համակարգի միջոցով գնահատվել են հետևյալ կերպ.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
«Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ	Անբավարար
«Մառք» ՍՊԸ	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

5. Գների նվազեցման բանակցությունների անցկացման անհրաժեշտության մասին

(Տ. Իգիթյան)

5.1 Հաշվի առնելով, որ «Մառք» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած գնային առաջարկը գերազանցում է գնման առարկայի նախահաշվային արժեքը՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցին որոշելու նպատակով կանցկացվի գների նվազեցման բանակցություններ համաձայն «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետի 5-րդ ենթակետի:

5.2 Գների նվազեցման բնակացությունները կկայանան 2017 թվականի ապրիլի 14-ին, ժամը 11:30-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ 321/1 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

6. Բաց ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Տ. Իգիթյան)

Բացման նիստը ընդհատել գների նվազեցման բանակցություններ անցկացնելու նպատակով՝ մինչև 2017 թվականի ապրիլի 14-ը, ժամը 11:30-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Տ. Իգիթյան

Անդամներ՝ ---------- Ա. Հարությունյան

---------- Ա. Կիրակոսյան

---------- Կ. Հարությունյան

---------- Ե. Կարապետյան

Քարտուղար՝ ---------- Ա. Համբարձումյան